Արդարեւ քանի մը օր յետոյ կուգայ Կեսարացին «մեծաւ ամբոխիւ եմուտ ի Բու-զանդիա անհեղացոյց եւ խռովս կերպիւ ուրեք զանիւծ, որ ամենայն հայոց ազգն սաստեցին ի նմանէ (Նոյն, էջ 117)։

Դարանաղցի կ՚ըսէ թէ «մեք այլ դեռ չէաք տեսել զինքն եւ չունէաք կարծիք ուխտա-ւորութեան ունել ընդ մեզ, այլ լցեր են չարա-խօսութեամբ եւ բորբոքեր են նախանձով բար-կութեամբ ընդ մեզ, թէ՛ Նազարէթին նենգու-թիւնն վասն երիցերացն եւ թէ մասնչի չՂա-զար չերիցին կողմանէն»։

Դարանաղցի կ՚ըսէ թէ «վասն այսորիկ պատճառաց փութացուցին ի բերելն՝ զմեզ դատապարտելով եւ հալածելով աղագաւ եւ այլոց վարդապետաց անհարկութիւն լիցի եւ այլ մի՛ ոք իշխեսցեն գալ, զի ինքն միայն բնակեսցէ ի մէջ հայոց ... սա այնպէս ունի խորհուրդ յայնմ ժամանակէն մինչեւ ցայսօր ժամանակի, զի ինքն միայն բնակելով յայսմ աշխարհի»։

Ուրեմն որոշ է թէ աշխարհական վէ-քիլները դարձեալ դարձ մը կ՚ընէին դէպի Կեսարացին, որ իբր պաշտպան և ախոյ-եան Հայ Եկեղեցւոյ՝ կը բերուէր Կ. Պոլիս հալածելու համար այն օրերը, ընդհանուր խառնակութենէն օգտուելով, կաթոլիկ կղերէն որսացուած Հայ եկեղեցականները,